ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ «ՀՖՖ») Բողոքարկման կոմիտեի նիստը կայացել է քաղաք Երևանում 2022թվ. նոյեմբերի 7-ին, այնուհետև շարունակվել նոյեմբերի 16-ին, հետագա քննարկումներով նոյեմբերի 20-ի շաբաթվա ընթացքում, իսկ արձանագրությունը կազմվել է 2022թվ. նոյեմբերի 28-ին և հրապարակվել 2022 թվականի նոյեմբերի 29-ին::

Բողոքարկման Կոմիտեի նիստի անցկացման վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, ՀՖՖ գրասենյակ, Խանջյան 27:

Բողոքարկման Կոմիտեի նիստի անցկացման կարգը՝ բաց, բողոքաբեր անձի, ինչպես նաև ՀՖՖ և ՀՖՖ ԿԷԿ /կարգապահական և էթիկայի կոմիտեի/ ներկայացիչների մասնակցությամբ:

Բողոքաբեր «Ֆուտբոլային Ակումբ Ուրարտու» ՀԿ /Ուրարտու ֆուտբոլային ակումբ/ ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկումները տեղի են ունեցել 2022 թվականի նոյեմբերի 7-ին, իսկ ՀՀՖ և ՀՖՖ ԿԷԿ ներկայացուցիչների մասնակցությամբ՝ 2022 թվականի նոյեմբերի 16-ին, ընդ որում Ուրարտու ֆուտբոլային ակումբի կողմից նշված օրվա նիստին և քննարկմանը ներկայացվել էր պատասխան՝ ՀՖՖ և ՀՖՖ ԿԷԿ կողմից ներկայացված գրավոր դիրքորոշման վերաբերյալ:

Բողոքարկման Կոմիտեի նիստին մասնակցել են կոմիտեի բոլոր 5 անդամները՝ նախագահ Արմեն Դավթյանը, փոխնախագահ/նիստի քարտուղար Դավիթ Սարգսյանը, Արամ Արոյանը, Զոհրապ Եգանյանը և Կարեն Ասատրյանը:

Բողոքարկման Կոմիտեի նիստն անցկացնելու համար պահանջվող քվորումն ապահովված էր:

Բողոքարկման Կոմիտեի նիստը նախագահում էր ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի նախագահ Արմեն Դավթյանը, քարտուղար՝ Դավիթ Սարգսյանը:

Բողոքարկման Կոմիտեի նիստը արձանագրվում էր, իսկ Ուրատուի ներկայացուցիչների հետ քննարկվում՝ նաև ձայնագրվում վերջինիս ներկայացուցիչների կողմից:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

1. Նիստի բացում
2. Ուրարտու ֆուտբոլային ակումբի բողոքի քննարկում
3. Բողոքարկման Կոմիտեի նիստի ամփոփում

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑ 1

ՈՐՈՇՈՒՄ 1

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ որևէ որոշում չկայացվեց, քանի որ այն կրում էր ընթացակարգային բնույթ:

Հարցի քննարկման ժամանակ ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի փոխնախագահ Դավիթ Սարգսյանը տեղեկացրեց, որ իր մոտ հնարավոր է լինի շահերի բախում՝ կապված այն փաստի հետ, որ իր որդին հանդիսանում է «Նոա» ՖԱ ֆուտբոլիստ, ներկայումս վարձավճարով հանդես է գալիս ԲԿՄԱ-2 ֆուտբոլային ակումբում:

Ուրարտուի ներկայացուցիչները հավաստեցին, որ շահերի բախում իրենց կարծիքով առկա չէ, և իրենց մոտ որևէ հարց չի առաջանում Դավիթ Սարգսյանի անաչառության մասով:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑ 2

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց նիստը վարող Դավիթ Սարգսյանը, իր դիրքորոշումը հայտնեց Ուրարտու ֆուտբոլային ակումբի գլխավոր տնօրեն Գոհար Վարդանյանը, ինչպես նաև իրավական ներկայացուցիչ Համլետ Պետրոսյանը:

Ներկայացված բողոքում Ուրարտու ֆուտբոլային ակումբը վիճարկում է ՀՖՖ ԿԷԿ 2022 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը՝ կապված Ուրարտու ֆուտբոլային ակումբի մարզիչ Դմիտրի Կուդրյաշովի նկատմամբ 2022 թվականի հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած Հայաստանի Պրեմիեր Լիգայի 10-րդ տուրի «Արարատ Արմենիա» - «Ուրարտու» հանդիպման 35-րդ րոպեին կիրառված պատժամիջոցի՝ կարմիր քարտի հետ:

Ուրարտու ֆուտբոլային ակումբը պահանջում է բեկանել ՀՖՖ ԿԷԿ առ 20.10.2022 նիստի համապատասխան որոշումը:

Ուրարտու ֆուտբոլային ակումբի պահանջի հիմքում ընկած են հետևյալ հանգամանքները.

1. ՀՖՖ և ՀՖՖ ԿԷԿ կողմից թույլ են տրվել ընթացակարգային խախտումներ՝ կապված ՀՖՖ ԿԷԿ կողմից նշված որոշման կայացման հետ, որոնք ունեն իրավական բնույթ.
2. ՀՖՖ կողմից իրականացվել է երկու տույժի կիրառում Դմիտրի Կուդրյաշովի կողմից իրականացված խախտման նկատմամբ, մասնավորապես.
   2.1 ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգի /ՀՖՖ ՖԿՀ/ միջոցով՝ համաձայն որի Դմիտրի Կուդրյաշովը որակազրկվել է մեկ հանդիպմանը մասնակցելուց.
   2.2 Այնուհետև ՀՖՖ ԿԷԿ կողմից կայացված որոշմամբ, որի մասին Ուրարտու ֆուտբոլային ակումբը ծանուցվել է ավելի ուշ, որով ոչ իրավական ձևակերպմամբ նշված է մարզչի որակազրկում 09.11.2022 որպես կիրառված պատժամիջոց.

2.3 Ընթացակարգային առումով ՀՖՖ ՖԿՀ համակարգում զետեղված պատժամիջոցը չի փոփոխվել նույնիսկ ՀՖՖ ԿԵԿ 20.10.2022 որոշման ընդունումից հետո, այն փոփոխվել է միայն 2022թվ. հոկտեմբերի 25-ից հետո, այն էլ որոշակի խմբագրմամբ:

3. Իրավական առումով ինչպես ՀՖՖ ԿԷԿ, այնպես էլ ՀՖՖ ՖԿՀ միջոցով ծանուցված որոշումներն ունեն իրավական հավասարազոր ուժ և չեն կարող ունանել հակասություններ, իսկ այս դեպքում նման հակասություն առկա է.
4. Ուրարտու ֆուտբոլային ակումբը հստակ պահպանել է ՀՖՖ ՖԿՀ համակարգում զետեղված որակազրկման պահանջը, իսկ ՀՖՖ ԿԷԿ որոշումը չի կարող իրավական ուժ ունենալ, քանի որ թերի է և վերաբերում է նույն փաստին/խախտման դեպքին, որի վերաբերյալ արդեն առկա է կիրառված պատժամիջոց.
5. Ավելին ՀՖՖ ԿԷԿ որոշումը ընդունվել է խախտումը կատարելուց գրեթե տաս օր հետո, թեև խախտման դեպքից անմիջապես հետո եղել ՀՖՖ ԿԷԿ նիստ, որը չի անդրադարձել այս խախտմանը, իսկ Ուրարտուն ծանուցված չի եղել ՀՖՖ ԿԷԿ նիստի և հնարավորություն չի ունեցել ներկայացնելու իր փաստարկների վերաբերյալ.
6. ՀՖՖ պրոֆեսիոնալ ֆուտբոլի անցկացման կանոնակարգի 5-01 հոդվածը հստակ սահմանում է, որ ֆուտբոլային սուբյեկտը պետք է կատարի ՀՖՖ այլ մարմինների կողմից ընդունված և պատշաճ ծանուցված որոշումները, իսկ պատշաճ ծանուցում է համարվում նաև ՀՖՖ ՖԿՀ միջոցով իրականացված ծանուցումը, ինչն էլ հստակ պահպանվել է Ուրարտու ֆուտբոլային ակումբի կողմից, ավելին, ՀՖՖ ԿԷԿ որոշումից գրեթե մեկ շաբաթ հետո միայն ՀՖՖ ՖԿՀ համակարգում տեղադրվել է ՀՖՖ ԿԷԿ այս հարցին վերաբերող խմբագրված որոշումը, որն էլ իր հերթին տարբերվում էր ՀՖՖ ԿԷԿ ընդունված և էլեկտրոնային եղանակով Ուրարտու ֆուտբոլային ակումբին ծանուցված որոշումից.
7. Հիմք ընդունելով Ուրարտու ֆուտբոլային ակումբի կողմից ՀՖՖ ՖԿՀ համակարգով ծանուցված պատժամիջոցի պատշաճ կատարումը, ինչպես նաև ՀՖՖ ԿԷԿ որոշման ոչ իրավական բնույթը, այնպես էլ նշված հակասությունները, Ուրարտու ֆուտբոլային ակումբը գտնում է, որ ՀՖՖ ԿԷԿ 2022 թ. հոկտեմբերի 20-ի Ուրարտու ֆուտբոլային ակումբին և մարզիչ Դմիտրի Կուդրյաշովին վերաբերող որոշումը բեկանել՝ այն ամբողջությամբ անվավեր ճանաչելու հիմնավորմամբ:

ՀՖՖ և ՀՖՖ ԿԷԿ կողմից Ուրարտու ֆուտբոլային ակումբի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացվել է հետևյալ դիրքորոշումը.

1. ՀՖՖ ԿԷԿ կողմից որոշումը կայացվել է համաձայն ՀՖՖ ԿԷԿ գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի և որոշումը չի պարունակում որևէ իրավական թերացում, առկա է տեխնիկական վրիպակ, որի մեկնաբանումը Ուրարտու ֆուտբոլային ակումբը կարող էր ստանալ համապատասխան պարզաբանման պահանջի միջոցով, սակայն զերծ է մնացել նման պարզաբանում ուղարկելուց.

2. Որպես այդպիսին որևէ երկակի պատժամիջոցի վերաբերյալ խոսք չի կարող լինել, քանի որ Ուրարտու ֆուտբոլային ակումբը քաջատեղյակ է, որ ՀՖՖ ՖՄՀ ավտոմատ /ինքնաբերաբար/ կարգով է զետեղում պատժամիջոց այս կամ այն ֆուտբոլային սուբյեկտի վերաբերյալ կարմիր քարտի ստանալու հիմքով՝ նշելով որակազրկում մեկ հանդիպումով, ինչը վերջնական պատժամիջոց չէ.
3. Ավելին, Ուրարտու ֆուտբոլային ակումբին հայտնի է, որ նման խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցը հանդիսանում է առնվազն երկու հանդիպումով որակազրկում, այնինչ ՀՖՖ ՖԿՀ համակարգում ներառված պատժամիջոցը վերաբերել է զուտ մեկ հանդիպումով որակազրկման, ինչը հստակ ցույց է տալիս, որ այն վերջնական չէ.
4. Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ ՀՖՖ ՖԿՀ և ՀՖՖ ԿԷԿ ստացված ծանուցումներն ունեն հավասարազոր ուժ, ապա ֆուտբոլային սուբյեկտը նման դեպքերում պետք է ղեկավարվի ՀՖՖ ԿԷԿ ընթացակարգով, քանի որ այն վերաբերելի է հենց նման խախտումներին, իսկ ՀՖՖ ՖԿՀ և ՀՖՖ ԿԷԿ հակասությունը կրել է տեխնիկական բնույթ.
5. Հաշվի առնելով նշված հանգամանքները, ՀՖՖ և ՀՖՖ ԿԷԿ ներկայացուցիչները պնդեցին, որ ՀՖՖ ԿԷԿ կողմից կայացված որոշումն իրավաչափ է, չի հանգեցնում որևէ տարընթերցման և ենթակա է ամբողջությամբ կիրառման:

Բողոքարկման կոմիտեի անդամները քննարկեցին բոլոր կողմերի բերված փաստարկներն ու իրավական դիրքորոշումը, որի հիման վրա եկան ստորև եզրահանգումներին.

1. ՀՖՖ ՖԿՀ և ՀՖՖ ԿԷԿ որոշումների մեջ առկա է հակասություն, որը պետք է մեկնաբանվի ի օգուտ ֆուտբոլային սուբյեկտի, իսկ նման հակասությունների բացառումը պետք է կանոնակարգվի.
2. ՀՖՖ ԿԷԿ որոշման մեջ տեղ գտած վրիպակը հանդիսանում է տեխնիկական բնույթի վրիպակ, սակայն հաշվի առնելով դրա հնարավոր իրավական հետևանքները ի լրումն առկա հակասության ՀՖՖ ԿԷԿ և ՀՖՖ ՖԿՀ տեղ գտած տեղեկատվության մեջ նույն արարքի նկատմամբ կիրառված պատժամիջոցի մասով, նման տեխնիկական վրիպակն ենթակա է մեկնաբանման ի օգուտ ֆոտբոլային սուբյեկտի՝ տվյալ դեպքում մարզիչ Դմիտրի Կուդրյաշովի.
3. Անհրաժեշտ է նշել, որ Ուրարտու ֆոտբոլային ակումբը թեև առներույթ ընդունել է իր մարզչի հակաօրինական վարքագիծը, սակայն բավարարվել է զուտ բանավոր նկատողությամբ, ինչը չի կարող բացառել հետագայում նման արարքների կրկնությունը.
4. Ուրարտու ֆուտբոլային ակումբի իրավական դիրքորոշումը, լինելով որոշակի առումով հիմնավորված, ամեն դեպքում ամբողջությամբ իրավաչափ չէ, քանի որ Ուրարտու ֆուտբոլային ակումբը որևէ քայլ չի նախաձեռնել ստեղծված իրավիճակի պարզաբանման ուղղությամբ, այլ ուղղորդվել է միայն և բացառապես իր մեկնաբանությամբ՝ առանց վերջնական իրավական պարզաբանումների և հստակեցումների.
5. Այս գործով ի հայտ եկած ընթացակարգային բացերն ենթակա են կանոնակարգման, ներառյալ և առանց սահմանափակման ՀՖՖ ՖԿՀ և ՀՖՖ ԿԷԿ որոշումների հարաբերակցությունը, ծանուցման առաջնահերթությունը, որոշ

դեպքերում ֆուտբոլային սուբյեկտի կողմից ՀՖՖ ԿԷԿ փաստարկների ներկայացման հիմքերն ու ժամկետները, ինչպես նաև ՀՖՖ ՖԿՀ որոշումների զետեղման և ծանուցման հստակ կարգն ու ժամկետները:

Բողոքի քննարկման արդյունքում Բողոքարկման Կոմիտեն միաձայն որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 2

1. Ուրարտու ֆուտբոլային ակումբի կողմից ՀՖՖ ԿԷԿ 2022 թվականի հոկտեմբերի 20-ի 3-րդ կետի դեմ բերված բողոքը բավարարել մասնակի՝ հաստատված համարել Ուրարտու ֆուտբոլային ակումբի մարզիչ Դմիտրի Կուդրյաշովի կողմից պատժի կրումը համաձայն ՀՖՖ ՖԿՀ սահմանված նախնական որոշման՝ այն է մեկ հանդիպումով որակազրկում, իսկ Ուրարտու ֆուտբոլային ակումբի նկատմամբ ՀՖՖ ԿԷԿ 2022 թվականի հոկտեմբերի 20-ի որոշման 3-րդ կետով կիրառված տուգանքը թողնել անփոփոխ:
2. Բողոքարկման Կոմիտեի որոշումը վերջնական է և բեկանման ենթակա չէ:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Սպորտային Արբիտրաժային Դատարանին /CAS/՝ վերջինիս ընթացակարգով սահմանված կարգով:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑ 3

Օրակարգի 3-րդ հարցի ներքո իրականացվեց Բողոքարկման Կոմիտեի նիստի ամփոփում:

ՈՐՈՇՈՒՄ 3

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ կայացվեց ստորև նշված արձանագրանային որոշումը.

1. Հաշվի առնելով Բողոքարկման Կոմիտեի օրակարգի 2-րդ հարցով ընդունված որոշումն առաջարկել ՀՖՖ-ին կանոնակարգել այս գործով ի հայտ եկած ընթացակարգային բացերն:

Նախագահ՝ Արմեն Դավթյան

Քարտուղար՝ Դավիթ Սարգսյան

Անդամներ՝ Արամ Արոյան

Կարեն Ասատուրյան

Զոհրապ Եգանյան